ման պահանջը, առանց որի նոր գեմստուոյի մէջ հայերը, գրեթէ ամէն տեղ, կը կազմէին փոքրամասնութիւն։ Յեղափոխութիւնը պարտաւոր էր սրբագրել հին իշխանութեան գործած չարիքները՝ վերացնելով կամայականօրէն գծուած անարդար սահմանները։ Օգակոմի հայ անդամի կողքին կազմուած միջկուսակցական մարմինը, գիւղատնտեսներ Յ. Փիրալեանի, Ս. Կամսարականի և Աւ. Շահխաթունեանի ու Գ. Խատիսեանի աշխատանքով, մշակել էր Անդրկովկասի վարչական բաժանման նոր ծրագիր, որ և Աւ. Շահխաթունեանի միջոցով ուղարկուեց Պետրոգրադ պատշաճ իշխանութիւններին ընդունելու համար։

Յեղափոխութիւնից յետոյ Պետրոգրադում կազմուել էր Սահմանադիր Ժողովի գումարման նախապատրաստական աշխատանքները կատարող մի յանձնախումբ, որի մէջ ներկայացուցիչներ ունէին Ռուսաստանի բոլոր ազգերը։ Հայերի կողմից այդ աշխատանքներին մասնակցում էր Գ.Խատիսեանը։ Նոյն ժամանակ ներքին գործոց նախարարութեան կից գործում էր տեղական ինքնավարութիւնների յանձնախումբը Բ. Վեսելովսկիի նախագահութեան տակ։ Օգուտելով առիթից՝ Բ. Վեսելովսկին հրաւիրեց խորհրդակցութեան Պետրոգրադ գտնուող անդրկովկասցի գործիչներին՝ Անդրկովկասի գեմստույական հարցը քննելու նպատակով։ Հայերից այդ խորհրդակցութեան մասնակցեցին Աւ.Շահխաթունեանը և Գ.Խատիսեանը, որոնք կարողացան համոզել, գեմստուօ մտցնելուց առաջ, Անդրկովկասը ենթարկել վարչական նոր բաժանման։ Քննութեան առնուեց Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցչի առաջարկած նախագիծը, որը, երկու խօսքով հետեւեալն էր. —

Արեւելեան Անդրկովկասը բաժանւում էր երկու մասի՝ թրքական և հայկական։ Հայկական մասի մէջ մտնելու էին Ղազախ, Գանձակ, Ջիւանշիր և Շուշի գաւառների լեռնային հայաբնակ մասերը և ամբողջ Զանգեզուրը, բացի Բարգուշատի հովտի մի քանի թուրք գիւղական համայնքներից, որոնք միացուելու էին Կարեագինի թրքական գաւառին։ Գանձակ քաղաքը բաժանուելու էր երկու մասի՝ թրքական և հայկական։ Ախալքալաքը, Լոռին և Ծալկայի հայկական մասը պէտք է միացուէին նոր կազմուելիք Ալեքսանդրապոլի նահանգին։

Այսպիսով, ստեղծուելու էր հոծ հայ ազգաբնակութիւն ունեցող մի շրջան՝ բաժանուած 4 նահանգի՝ Գանձակի, Երեւանի, Ալեքսանդրապոլի և Կարսի։ Համապատասխան ձեւով կազմուելու էր և հոծ թրքական շրջան։

Այս ծրագրի դէմ յանձնախմբում, ըստ էութեան, առարկեցին միայն վրացի ազգային-դեմոկրատները, որոնք գտնում էին, որ Ախալքալաքն ու Լոռին, իբրեւ վրացական սեփականութիւն, պէտք է մտնեն Վրաստանի սահմանների մէջ։ Թուրք ներկայացուցիչները յայտարարեցին, թէ իրենք լաւ ուսումնասիրած չեն խնդիրը, համապատասխան լիազօրութիւն չունեն և, հետեւաբար, չեն կարող մասնակցել հարցի լուծման։ Յանձնախումբը, իր ամբողջութեան մէջ, հաւանութիւն տուեց հայկական նախագծին, որը յետոյ նախարարութեան կողմից ընդունուեց իբրեւ հիմք կառավարական օրինագծի։ Այս վերջինը ուղարկուեց Թիֆլիս՝ Օգակոմին, որը, մի ամսւայ